ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մայիսի 13-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հունաստանի նախագահ Կոնստանտինոս Ստեֆանոպուլոսը՝ ՀՀ արտաքին գործերի նախագահ Վարդան Օսկանյանի ուղեկցությամբ: Վեհարանի գահասրահում նախագահին և հունական պատվիրակությանն ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը: Պատվիրակության կազմում էին Հունաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Գրիգորիս Նիոտիսը, ազգային էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ալեքսանդրոս Բալտասը, պաշտոնատար այլ անձինք ու գործարարներ: Հանդիպմանը ներկա էին նաև Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, գերաշնորհ հայրեր:

«Դարավոր պատմական կապեր ունեն հույն և հայ ժողովուրդները, սկսած Հելլենական շրջանից մինչև Բյուզանդիոն և մինչև այսօրվա Հունաստան, ուր այժմ ապրում են մեր բազմաթիվ զավակները, հպարտ լինելով որպես հույն քաղաքացիներ և հպարտ՝ որպես Հայ Առաքելական Ուղղափառ եկեղեցու զավակներ» խոսքերով սկսվող Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքը՝ ուղղված Հունաստանի նախագահին, ընթերցեց Հունաստանի թեմի առաջնորդ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը:

Վեհափառ Հայրապետն իր խոսքում փաստեց, որ Հունաստանն էր այն երկիրը, որտեղ 1922 թվականի Իզմիրի ջարդերից հետո հանգրվան գտան բազմաթիվ հայեր:

Այնուհետև Նորին Սրբությունն իր երախտիքը հայտնեց Հունաստանի նախագահին՝ անցյալ տարի Հունաստանի խորհրդարանի կողմից ապրիլի 24-ը որպես Հայոց ցեղասպանության օր հռչակման համար և նշեց, որ այն հունական իշխանությունների բարեկամական վերաբերմունքի մի նոր արտահայտություն էր: Բարեկամության ևս մի արտահայտություն էր անցած տարի Աթենքում՝ Մեղարոնի սրահում կազմակերպված «Հայաստանի գանձերը» ցուցահանդեսը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին:

Նորին Սրբությունն իր ողջույնը հղեց նաև Հույն Օրթոդոքս Եկեղեցուն, որի հետ Հայոց Եկեղեցին սերտ հարաբերություններ ունի:

Հունաստանի նախագահը ջերմագին շնորհակալություն հայտնեց հանդիպման համար՝ իր և իր ժողովրդի անունից Վեհափառ Հայրապետին մաղթելով շուտափույթ ապաքինում: Կարևորելով հանդիպումը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում, նախագահը հավաստիացրեց, որ այն նոր լիցք կհաղորդի երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը:

«Շնորհակալություն», - հանդիպման ավարտին հունարեն տառերով թոթին հանձնեց Վեհափառ Հայրապետը:

Ապա Հունաստանի նախագահը Կաթողիկոսական Ընդհանուր փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի ուղեկցությամբ ծանոթացավ Վեհարանի թանգարանում պահվող գանձերին, այցելեց Մայր Տաճար: